— Բժշկապետ Քարլ Ռիսման, — ներկայացրեց իրան Ասլանը, յետոյ ծանօթացրեց մեզանից ամէն մէկին:

Նա նստեց քահանայի մօտ եւ, դառնալով դէպի ռեսը, ասաց.

— Լաւ հիւրեր էք ունեցել: Ցաւում եմ, որ չհասայ ընթրիքին:

— Շատ սպասեցինք ձեզ, Աբգար ախպար, — պատասխանեց ռեսը, — ինչո՞ւ այդքան ուշացաք:

— Գիտէք, էլի՛... Երբ ես հովիւների մօտ եմ գնում, ամէն բան մոռանում եմ... նրանք էլ ինձ համար մի գառն էին մորթել, — պատասխանեց նա, աշխատելով սառնասիրտ ձեւանալ, թէեւ նրա ձայնը զգալի կերպով կոտրատւում էր սրտի յուզմունքից...

Նա դարձաւ դէպի Ասլանը.

— Ներեցէք, պարոն բժշկապետ, իմ անտեղի հարցասիրութեանը, դուք ի՞նչ դէպքով անցաք մեր լեռների այդ խորքերը: Մենք խիստ հազիւ անգամ ենք պատահում այստեղ եւրոպացիների:

Ասլանը պատասխանեց, որ զանազան ուսումնական նպատակներով ճանապարհորդութիւն է անում. նրան հետաքրքրում է այդ կողմերի հնութիւնները, բացի դրանից, ցանկութիւն ունի ծանօթանալ այդ երկրի լեռնաբնակների կեանքի ու սովորութիւնների հետ, եւ շատ շնորհակալ կը լինէր, եթէ պարոն վարժապետը կարելոյն չափ օգնէր իրան:

— Մեծ ուրախութեամբ, — պատասխանեց վարժապետը, — ես բաւական ուսումնասիրել եմ թէ այդ երկիրը եւ թէ նրա բնակիչներին: Ես պատրաստ եմ իմ նկատողութիւնների տետրակը ամբողջապէս ձեզ ընծայել, դուք կարող էք նրանից օգուտ քաղել:

— Շատ շնորհակալ կը լինեմ, — պատասխանեց Ասլանը, — ի՞նչ լեզուով է գրուած:

— Հայերէն:

— Այդ ոչինչ, ես թարգմանել կը տամ: Բայց ինձ համար աւելի թանկագին կարող էին լինել ձեր բերանացի տեղեկութիւնները:

— Այդ մասին կը խօսենք, շատ կը խօսենք, ես, որքան կարող եմ, բաւականաթիւն կը տամ ձեր հարցասիրութեանը: Դուք դեռ երկար կը մնաք մեզ մօտ, պարոն բժշկապետ, մեր գիւղացիների ձեռքում երբ մի օտար հիւր է ընկնում, շուտով բաց չեն թողնում:

— Շնորհակալ եմ: Բայց շատ ցաւում եմ, որ երկար մնալ չեմ կարող. ես առաւօտեան պէտք է ճանապարհ ընկնեմ: